

ԱԲԱԳ ՇԱԲԱԹ

Ս. Յարութեան Տօնը, որ այս տարի կը զուգադիպի Ապրիլ 17-ին՝ նախորդուած է Յիսուսի կեանքի վերջին դրուագները յիշեցնող եկեղեցական հանդիսութիւններու ամբողջ շարքով մը: Այդ շարքը կը կոչուի ԱԲԱԳ ՇԱԲԱԹ, որ կը նշանակէ ամենէն մեծը, ամենէն բարին ու սուրբը: Այդ շարքուան իւրաքանչիւր օրը եւս կը կոչուի աւագ՝ ինչպէս Աւագ Երկուշաբթի, Աւագ Երեքշաբթի, Աւագ Չորեքշաբթի, Աւագ Հինգշաբթի, Աւագ Ուրբաթ, Աւագ Շաբաթ, իսկ Կիրակին Ս. Յարութեան Օրն է: Յիշուած օրերէն իւրաքանչիւրը կը յիշատակէ Յիսուսի կեանքէն առնուած մասնայատուկ դրուագ մը ու եկեղեցական խորհրդանշական արարողութիւններ կը մատուցուին անոնցմէ իւրաքանչիւրին:

Աւագ Շաբաթը որպէս խորհուրդ՝ Աստուծոյ յայտնած հայրական անսահման սէրն ու ներողամտութիւնը կ'արտայայտէ մեղաւոր եւ անհնազանդ մարդուն նկատմամբ:

ԱՂՕԹՔ Ե. ԱՍՈՐԻ

Մի՛ յապաղիր ողորմելու ինձի, Տէ՛ր. առանց Քու ներգործութեանդ բարին երբեք չի գործեր իմ մէջս, եւ սերմանուածը չի բուսնիր հոգիիս անդաստանին մէջ, որովհետեւ իմ մէջս նետուած Քու խօսքիդ սերմը, քաղց չարքշնամին, եւ բուսածը չորցաւ տապէն, իսկ միւսը, փուշերուն մէջ իյնալով, խեղդուեցաւ ու չորցաւ:

Տէ՛ր, լծէ աչքերս, ինչպէս մշակը ամուլին, որ անդադար արտասուազոչ պաղատիմ Քեզի արժանի ըլլալու Քու ողորմութեանդ:

ԲԱՆԿԱԼ

Բանկալին մէջ ծառայող նուիրեալները, աչալուրջ կերպով պէտք է հսկեն հաւատացեալներու կողմէ վառուած մոմերուն, հալած մոմերը հանելով եւ տեղ բանալով եկեղեցի նոր ժամանող հաւատացեալներու մոմավառութեան:


Բանկալէն ներս կոչուած ազգայինները, պարտականութիւն ունին նաեւ հսկելու եկեղեցւոյ յարկէն ներս տիրող կարգապահութեան: Անոնք իրենց կեցուածքով եւ խօսակցութեամբ պէտք է ըլլան միշտ զուսպ եւ երկիւղած, չխանգարելու համար եկեղեցւոյ վեհութիւնն ու արարողութիւնները:

Բանկալի պատասխանատուներու պարտականութիւնն է նաեւ, Ս. Պատարագի ընթացքին «Առաքելոց սրբոց, մարգարէից , Վարդապետաց...» յիշատակութեան պահուն, պնակներու շրջագայութիւնը կատարել, ընդունելու համար հաւատացեալներու աղօթքով ու հաւատով թրծուն նուիրատուութիւնները, որ փրստոնէական եկեղեցւոյ հնամենի գեղեցիկ աւանդութիւններէն մին է, եւ կը բացայայտէ հաւատէն նարագայթող գոհողութեան ոգին:

ԱՌԱԿ 14.2-3

Պարկեշտ կեանք կ'ունենայ ան, որ կը վախճայ Տիրոջմէ, իսկ ան որ կը յամառի իր ընթացքին մէջ՝ պիտի անարգուի:

Անզգամներուն բերաններէն անարգանքի խօսք դուրս կուգայ, մինչ իմաստուն մարդոց շրթները զուսպ են:



ԲՈՒ ԽՕՍԲԻ ԽՅ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՌԷ ԽՅ ԶԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ԱՊՐԻԼ 2022

ԹԻՒ 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Երգ. 1.1-2.3: Չք. 9.9-15: Փլպ. 4.4-7: Սոթ. 20.29-21.17

ՃԱՂԿԱԶԱՐԴ

ՅԻՍՈՒՍ ԶՐԻԱՏՈՒՄ ԱԷՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 20.29-21.17

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիփովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրենց: Ճամբու եզերքին նստած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց, որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք, որ ընեմ ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գթաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփագէ՝ Ձիթենաց լեռան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը դրկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէ՛ք սա դիմացի գիւղը եւ անմիջապէս հոն կապուած էջ մը պիտի գտնէք իր աւանակին հետ. փակեցէ՛ք եւ ինձի բերէ՛ք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տէրը անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականանայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք: Ահա էու թագաւորդ քեզի կու գայ: Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էջն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ոստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւէն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան, որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ ֆաղաբը դրդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին ֆաղաբի բնակիչները եւ ամբոխը կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ ֆաղաբէն»:

Ապա Յիսուս տանար մտաւ եւ դուրս վոնտեց բոլոր անոնք որոնք տանարին մէջ առուծախ կ'ընէին. լումայափոխներուն սեղանները եւ աղանձվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մինչ դուք գայն աւագակներու որջի վերածած էք»: Տանարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ ֆահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տանարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր"»:

Ապա Յիսուս ձգեց զանոնք եւ ֆաղաբէն դուրս ելաւ՝ դէպի Բեթանիա, եւ հոն գիշերեց:

Ծ Ա Ղ Կ Ա Չ Ա Ր Գ



Մեծ պահոց վեցերորդ Կիրակին կը կոչուի ծաղկագարդի Կիրակին: Ծաղկագարդը մեր Տէր Յիսուս Քրիստոսի Երուսաղեմ յաղթական մուտքի տօնն է:

Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Երուսաղեմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր, ձիթենիի եւ արմաւենիի նիւղերով կը դիմաւորէ զինք: Անոնք նոյնիսկ իրենց հագուստները կը փռեն գետին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի:

Երբ Յիսուս տաճար կը մտնէ, կը տեսնէ որ շուկայի վերածուած է ան, անմիջապէս կը մաքրէ տաճարը ու բռնորին կը հասկցնէ, որ տաճարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկագարդի Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկագարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի նիւղերը եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը կը տանին տուն :

Յատկանշական է Ծաղկագարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները զարդարուն ու գունաւոր մոմերով:

Ի՞նչ է թափօրը:

Ս. Պատարագի սկիզբը, պատարագիչ եկեղեցականը խորան բարձրանալէ ետք վարագոյրը կը գոցուի. վարագոյրին ետին կը պատրաստէ Ս. Պատարագի սկիզբը՝ նշխարն ու գինին: Վարագոյրը բացուելով, պատարագիչը խորանէն վար կ'իջնէ խաչ ու բուրվառ ձեռքին եւ դպիրներ՝ խումբով առջեւէն շարական երգելով ժողովուրդին մէջ կը դառնան: Այս կը կոչուի թափօր:

Թափօրը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ շրջիլն ու փարօգելը:

Երբ պատարագիչը թափօր կը դառնայ, հաւատացեալները պարզ դիտողներ պէտք չէ մնան: Այսօր ընդհանրացած երեւոյթ դարձած է թափօրի առնել տեսնել հաւատացեալները, որոնք անտարբերութեամբ կը հետեւին եկեղեցւոյ մէջ դարձող պատարագիչին: Անոնք, որոնք մօտ են պատարագիչին, բարեպաշտական մղումէ մեկնած կը մօտեման անոր ձեռքի խաչը համբուրելու, ոմանք փառաբանութիւն կը գգան խաչը համբուրել, ուրիշներ պատարագիչին հանելի թուելու համար կը համբուրեն, ուրիշներ կը գգան թէ պարտաւոր են համբուրելու, եւ ինչքան գգալի կ'ըլլայ խաչը համբուրելու մեքենական շարժումները: Իսկ անոնք, որոնք պատարագիչէն հեռու են, ի՞նչ կ'ընեն: Անոնք ըսելիք չունին:

Պատարագիչը երբ ժողովուրդին մէջ թափօր կը դառնայ, հաւատացեալները պէտք է մեղմ ձայնով ըսեն.

**«Յիշեսցի՛ր եւ գնե՛զ առաջի անմահ գառինն Աստուծոյ», այսինքն՝ «Մեզ ալ յիշէ Աստուծոյ գառին (Քրիստոսի) առջեւ:**

**ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ ՈՐՔԱՆ ԶՕՐԱՆԱՅ՝ ԱՅՆՔԱՆ ԱՐԵԼԻ ԶԵՐՄԵՆԱՆՎՈՒԹԵԱՄՔ ՊԷՏՔ Է ԱՂՕԹԵԼ**

Տագնապի մէջ ըլլալով՝ աւելի ջերմեանդութեամբ կ'աղօթէր (Ղկ. 22.44): Ուշագրաւ է, որ որքան փորձութեան պահը մօտենար՝ Քրիստոս այնքան աւելի ջերմեանդութեամբ կ'աղօթէր: Աշխարհի փրկագործութեան ժամուան մերձեցումին հետ՝ կը կրկնապատկուէր մեր Տիրոջ տագնապն ու աղօթքի կրակը:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ**

Ընդհանրապէս մարդիկ թէթել փորձութիւնները աղօթքով կը դիմակալեն, բայց երբ փորձութիւնները ծանրանան՝ անոնք նահանջ կ'արձանագրեն իրենց աղօթական կեանքին մէջ: Այդպէս չըրաւ մեր Տէրն ու Փրկիչը: Զօրաւոր փորձութիւնները պատճառ չեղան, որ Յիսուս հրաժարէր աղօթքէն: Ասկէ առաջ շատ աղօթած էր Յիսուս, բայց ասիկա առաջին անգամն է որ արիւնով, քրտինքով ու արցունքով կ'աղօթէր (հմմտ Եբր. 5.7), եւ ինչո՞ւ, որովհետեւ ծանր էր փորձութիւնը: Նոյնը պէտք է ընէ Քրիստոսի իւրաքանչիւր հետեւորդը: Որքան ծանր ըլլայ փորձութիւնը՝ այնքան աւելի ջերմեանդութեամբ պէտք է աղօթել:

*Տէր մեր Յիսուս Քրիստոս այս Սուրբ Շաբթուան խորհուրդով օրհնէ մեր հայ ժողովորդը ամբողջ Յարութեան գորութեամբ առաջնորդէ մեզ դէպի խաղաղ նաւահանգիստ: Ամէն:*

**ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՆՏՈՒՆԵՔ ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՐԴԱՆՔ**

Սաղմոս 5

Ո՛վ Տէ՛ր, լսէ ինչ որ կ'ըսեմ, նկատի՛ առ հեծեծանքներս:

Մտիկ ըրէ աղօթքս, ո՛վ իմ Թագաւորս եւ Աստուածս, կ'աղաչե՛մ քեզի:

Ո՛վ Տէ՛ր, առտու կանուխէն լսէ՛ կանչս եւ սպասեմ պատասխանիդ:

Դուն անօրէնութիւն չես սիրեր, ո՛վ Աստուած դուն չես կրնար չարիքին հետ հաշտուիլ: Հպարտները չես հանդուրժեր եւ կ'ատես անօրէնութիւն գործողները սուտ խօսողները կորուստի կը մատնես, արիւնահեղ ու նենգաւոր մարդէն կը զգուիս, ով Տէր: Բայց ես քու անչափ սիրոյդ ապաւինած՝ քու տունդ պիտի մտնեմ, երկիւղածութեամբ դէպի սուրբ տաճարդ պիտի դառնամ ու երկրպագեմ:

Տէ՛ր, արդարութեամբդ առաջնորդէ զիս, քու նամբաղ հարթէ՛ իմ դիմացս, որպէսզի դարձնուտ թշնամիներս տեսնեն, որովհետեւ անոնց բերանը ստութեամբ լի է, եւ անոնց սիրտը՝ չարութեամբ լեցուն. բացուած գերեզման է կոկորդն անոնց եւ նենգութեան գործիք դարձեր են լեզուներն անոնց:

Ով Աստուած, անոնց յանցանքին պատիժը տուր, իրենց խորհուրդները թող կործանեն զիրենք. մերժէ զիրենք իրենց ամբարշտութիւններուն համար, որովհետեւ քեզի դէմ ըմբոստացան:

Բայց թող ուրած ըլլան բոլոր քեզի ապաւինողները, յարիտեան թող ցնծան, որովհետեւ դուն ես իրենց պաշտպանը, եւ թող քեզմով պարծենան քեզ սիրողները, ամէն:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍՍՂՄՈՍԱԳԻՐՔԷՆ